ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 12011/10-10

ք. Երևան «13» մարտ 2026թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կ. Ղարիբյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Նվիրաբերող), մի կողմից, և Գորիսի պետական համալսարանը (այսուհետ՝ Համալսարան), ի դեմս համալսարանի ռեկտոր Տիգրան Վանդունցը որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Նվիրառու), մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1910-Ն որոշմամբ (այսուհետ՝ որոշում)՝ 1111 «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր» ծրագրի 12011 «2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրում» միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Նվիրաբերողը միջոցառման իրականացման նպատակով Նվիրառուին հատկացնում է /նվիրաբերում է ֆինանսական միջոցներ՝ Համալսարանի կողմից Կոմիտե ներկայացրած՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ Լեռնային Ղարաբաղի ուսումնական հաստատությունների ուսանող հանդիսացող և 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո բռնի տեղահանված, Համալսարանում համապատասխան մասնագիտություններով (կրթական ծրագրերով) սահմանված կարգով հրամանագրված/տեղափոխված, 2024/2025 ուսումնական տարվա արդյունքում միջին որակական գնահատականի 75.00 տոկոսը հաղթահարած, թվով 7 ուսանողի 2025/2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ուսման վարձավճարը փոխհատուցելու համար:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1 Սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված փոխհատուցման ենթակա գումարի չափը կազմում է՝ 1445000 (մեկ միլիոն չորս հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ

3.1 Նվիրաբերողն իրավունք ունի՝

3.1.1 ցանկացած ժամանակ ստուգելու Նվիրառուի կողմից պայմանագրով իրականացվող գործընթացը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.
3.1.2. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու հանձնել անավարտ միջոցառման արդյունքները:

3.2. Նվիրառուն իրավունք ունի՝

3.2.1. իրականացվող միջոցառման համար Նվիրաբերողից պահանջելու վճարել նախատեսված գումարը.

3.3. Նվիրաբերողը պարտավոր է՝

3.3.1. կատարել միջոցառման իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.
3.3.2. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.
3.3.3. իրականացված միջոցառման և սույն պայմանագրի պահանջներին համապատասխանելու դեպքում ընդունել Նվիրառուի ներկայացված կատարողական հաշվետվությունները:

3.4. Նվիրառուն պարտավոր է՝

3.4.1. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել միջոցառման և (կամ) սույն պայմանագրով սահմանված չափաքանակներով և նպատակներին համապատասխան.
3.4.2. կատարել Նվիրաբերողի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.
3.4.3. պայմանագրով նախատեսված միջոցառման իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2026 թվականի դեկտեմբերի 18-ը:
3.4.4. Նվիրաբերողին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով:
3.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառման իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Նվիրաբերողի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.
3.4.6. վարել հաշվապահական փաստաթղթերը օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5.2 Սույն պայմանագրում և նրա անբաժանելի մասը կազմող հավելվածում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ: Կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ն վ ի ր ա բ ե ր ո ղ	Ն վ ի ր ա ռ ու
ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե ք. Երևան, Օրբելի եղբայրների 22 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011048288 ՀՎՀՀ 02704199	Գորիսի պետական համալսարան ք.Գորիս, Ավանգարդ 2 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900288000012 ՀՎՀՀ 092106063
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող _____ Կ.Ղարիբյան (ստորագրություն)	Ռեկտոր՝ _____ Տ.Վանդունց (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ

Հավելված
N 12011/ պայմանագրի

Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրավիճակով պայմանավորված 2023 թ. սեպտեմբերի 19-ից հետո բռնի տեղահանված ուսանողների տվյալներ

Գորիսի պետական համալսարան									
N	Անուն, ազգանուն, հայրանուն	Անձնագիր/ նույնականացման քարտ	ՀԾՀ	Կրթական ծրագրի դասիչ Կրթական ծրագրի անվանում	Ուսուցման ձև /առկա, հեռակա/	Կուրս	Մասնաճյուղ (առկայության դեպքում նշել մասնաճյուղի	2024/2025 ուսումնական տարվա արդյունքում ձևավոր	Բուհում սահմանված ուսման վարձավճարի կիսամյակային չափ (ՀՀ դրամ)
1.	Ժորա Հայրապետյան Միերի	AP 0519474	2808000170	042101.01.6 Իրավագիտություն	հեռակա	3-րդ		95.33	235000
2.	Բորիս Ալլահվերդյան Նվերի	AL 0591134	1434030296	042101.01.6 Իրավագիտություն	հեռակա	2-րդ		79.54	235000
3.	Միլենա Աղաբեկյան Արշակի	AU 0311723	6125040216	011401.11.6 Կերպարվեստ	առկա	4-րդ		80.65	175000
4.	Մանուշակ Վանյան Շահենի	AT 0624027	6131040109	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	հեռակա	3-րդ		76.88	175000
5.	Անի Գրիգորյան Արտուշի	AU 0635184	6102910281	011301.01.7 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, մագիստրատուրա	հեռակա	2-րդ		91.25	205000
6.	Դավիթ Արզումանյան Գրիգորի	AX 0224097	2410790275	042101.01.7 Իրավագիտություն, մագիստրատուրա	հեռակա	2-րդ		88,18	235000
7.	Դավիթ Մինասյան Համլետի	AU 0566521	3027010115	031101.01.6 Տնտեսագիտություն	հեռակա	5-րդ		75,93	185000
	Ընդամենը								1445000